# ՎԱՀԲ ԻԲՆ ՄՈՒՆԱԲԲԻՀ / ԻԲՆ ՀԻՇԱՄ

# ԹԱԳԵՐԻ ՄԱՏՅԱՆ (ՔԻՏԱԲ ԱԼ-ՏԻՋԱՆ)

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Բաբելոն (Միջագետքի) – Արաբ մատենագիրները Բաբելոն, կամ Բաբիլ են անվանում ինչպես Բաբելոն քաղաքը, այնպես էլ Բաբելոնիա երկիրը: (Տե՛ս Babil, G. Awad EOI, CD-ROM, (I: 846a)):*

[2] *Երկկոտոշավորը – Ալեքսանդր Մեծը, կամ Ալեքսանդր Մակեդոնացին մահմեդական մատենագիրների մոտ նույնացվում է Ղուրանի XVIII սուրայում հիշատակվող «Զու-լ-Կառնայն»-ի, այսինքն «երկկոտոշավորի» հետ: Երկկոտոշավորին տրվեց իշխանություն երկրի վրա ծայր արևմուտքից մինչև ծայր արևելք և նա, ի պատասխան հնչված ժողովուրդների խնդրանքի, մի հսկա պատնեշ կառուցեց երկաթից ու պղնձից ընդդեմ առասպելական Գոգ ու Մագոգի (Յաջուջ և Մաջուջ) հարձակումների: (al-Iskandar, W. Montgomery Watt, EOI, CD-ROM, (IV: 127a)):*

[3] *Թուրքեր – Այսպես էին արաբները կոչում խազարներին և նրանց ցեղակիցներին, որոնց լեզուները թյուրքական լեզվաընտանիքին են պատկանում:*

[4] *Ալեքսանդր Հռոմի – Նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացուն, տես ծնթգր. 2: Տվյալ դեպքում «Հռոմ» բառը օգտագործված է հույն, հելլեն իմաստով, մինչդեռ այլ տեղերում արաբ մատենագիրներն այս բառը օգտագործում են «Բյուզանդացի» իմաստով:*

[5] *Իկրիտիս ծոց – Իկրիտիսը կամ Իկրիտիշը Կրետե կղզին է: Իկրիտիսի ծովը Միջերկրականն է, իսկ Իկրիտիսի ծոցը հավանական է Կրետեի մոտակա ծովն է: Պետք է նկատի ունենալ նաև, որ երբեմն, արաբ պատմիչները Կրետեն շփոթում են Կիպրոս կղզու հետ: (Ikritish, R. Mantran, EOI, CD-ROM, (III: 1082a)):*

[6] *Աբրահա – 6-րդ դարի Արաբիայի քրիստոնյա թագավոր, որն ըստ ավանդության, մի մեծ արշավանք է կատարել դեպի Մեքքա, Մուհամմադ մարգարեի ծննդյան տարին (570): Արժանահավատ աղբյուրների տեղեկությունների համաձայն Եթովպիայի թագավորը՝ Էլլեսթեյոսը, արշավեց դեպի հարավային Արաբիա 531 թվականից մի քանի տարի առաջ, սպանեց այդ երկրի թագավորին, նշանակեց մի խամաճիկ թագավոր ու վերադարձավ իր երկիրը: Ապա տեղի ունեցավ հականեթովպական ապստամբություն, որի հետևանքով գահին բազմեց Աբրահան: Նա փորձեց ինքնուրույն դահակալ մնալ չենթարկվելով ո՛չ Եթովպիային, ո՛չ Բյուզանդիային և ո՛չ էլ Սասանյան Իրանին: Սակայն նրա հեռահար արշավանքների մասին արձանագրություններն ու այլ պատմական աղբյուրները չեն հաղորդում: Մնացածը հետագայի առասպելական պատմություններ են, որ վերագրվել են Աբրահային: (Abraha, 'A. F. L. Beeston, EOI, CD-ROM, (I: 102a)):*

[7] *Կավատը – Հավանաբար սա Սասանյանների արքա Կավատ Ա-ն է (488–496, 498/409–531):*